ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11 նոյեմբերի 2025թ.

Ժամը 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Տարոն Վարդանյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Տիրան Խաչատրյան, Հայկ Հովհաննիսյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝	Լարիսա Առաքելյան, Տաթևիկ Պալոյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Նելլի Աբովյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման, հայտերով ներկայացրած փաստաթղթերի առկայության, գնային առաջարկների համեմատման և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցման մասին.

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 08.10.2025թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2025 թվականի նոյեմբերի 10-ին, Ժամը՝ 11:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

1.3 Գնման հայտով սահմանված գնման առարկայի քանակը և գինը.

Չափաբաժնի h/h	Անվանումը	Հաստատված քանակը	Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտով նախատեսվող գին /ՀՀ դրամ/
1	Սննդի պատրաստման ծառայություններ, ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ներում	1	1.642.500.000

2. Բաց մրցույթին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 «**ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-26/1**» ծածկագրով հայտարարված բաց մրցույթին մասնակցել է թվով 4 մասնակից.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Էլ. հասցե	ՀՎՀՀ	Հասցե	Հեռ.
1.	«ԹԱԹ-ՄԱՐ» ՍՊԸ	M4rgaryantatul@yandec.com	07633128	Ք. Իջևան, Մեղատագործների փ., շենք 1/11	077-06-23-21
2.	«Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ	Arpi34332@gmail.com	35085753	Ք. Երևան, Բագրատունյաց 21/2	094-89-86-89
3.	«Պրոդ Ինվեստ» ՍՊԸ	Prodinvest24gmail.com	01347339	Ք. Երևան, Անդրանիկի 44 բն. 3	093-20-22-28
4.	«Բնական բարիքներ» ՍՊԸ	Hayi-vogi@mail.ru, info@eltender.am	00484593	Ք. Երևան, Էրեբունի 34/62	077-67-45-10

3.Բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին

3.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-26/1» ծածկագրով ԲՄ էլեկտրոնային ձևով կազմակերպված ընթացակարգի բոլոր Մասնակիցներն իրենց գնային առաջարկները ներկայացրել են ԱԱՀ-ով:

Մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները.

Չափաբաժին	Հբաղ. Տեղ	Չափաբաժնի անվանումը	Մասնակցի անվանումը	Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտով նախատեսվող գին /ՀՀ դրամ/	Գնային առաջարկ (ՀՀ դրամ)		
					Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	Սննդի պատրաստման ծառայություններ, ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ներում	«Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ	1.642.500.000	1.034.259.258,3	206.851.851,7	1.241.111.110
	2		«Պրոդ Ինվեստ» ՍՊԸ		1.157.962.500	231.592.500	1.389.555.000
	3		«Բնական բարիքներ» ՍՊԸ		1.165.810.000	233.162.000	1.398.972.000
	4		«ԹԱԹ-ՄԱՐ» ՍՊԸ		1.174.935.000	234.987.000	1.409.922.000

3.2 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկների կարիքների համար 2026թ.-ի սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով, բաց մրցույթի միջոցով, էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում հանձնաժողովը որոշեց՝ Մասնակիցներ «Պրոդ Ինվեստ» ՍՊԸ-ի և «Բնական բարիքներ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար, քանի որ վերջիններիս հայտերը համապատասխանում էին հրավերով սահմանված պահանջներին, իսկ Մասնակիցներ «Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ-ի և «ԹԱԹ-ՄԱՐ» ՍՊԸ-ի հայտերում բացակայում էր գնային առաջարկին կից ներկայացվող գնային առաջարկի բացվածքը հետևյալ տեսքով՝

- Օրվա հասանելիք հացի գինը (ներառյալ բոլոր ծախսերը և հարկերը),
- Օրվա նախաճաշի գինը առանց հացի (ներառյալ բոլոր ծախսերը և հարկերը),
- Օրվա ճաշի գինը առանց հացի (ներառյալ բոլոր ծախսերը և հարկերը),
- Օրվա ընթրիքի գինը առանց հացի (ներառյալ բոլոր ծախսերը և հարկերը):

Հաշվի առնելով վերը նշվածը «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջները, մեկ աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը և Մասնակիցներ՝ «Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ-ին և «ԹԱԹ-ՄԱՐ» ՍՊԸ-ին տալ շտկման հնարավորություն: Նշված

Մասնակիցների էլեկտրոնային փոստին ուղարկել շտկում կատարելու մասին ծանուցում և մեկ /1/ աշխատանքային օրվա հաշվարկը կատարել ծանուցումն ուղարկելու պահից:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել շտկման վերջնաժամկետը լրանալուց հետո:

Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝	_____	**Տ. Վարդանյան**
Քարտուղար՝	_____	**Ն. Աբովյան**
Գնահատող անդամներ՝	_____	**Տ. Խաչատրյան**
	_____	**Հ. Հովհաննիսյան**
Բացող անդամներ՝	_____	**Լ. Առաքելյան**
	_____	**Տ. Պալոյան**